Օրվա դասի պլան

Առարկա - Մայրենի

Դասագիրք - Դավիթ Գյուրջինյան,Լիլիթ Տեր- Գրիգորյան

Դասարան - 2-րդ դասարան, 3- րդ դասարան

Դասի թեմա - Գրավոր աշխատանք <<Վայելչագրության մրցույթ>>

Նպատակը - Արժևորել մայրենի լեզվի դերը իր կյանքում , վայելուչ արտագրել ոչ մեծ տեքստեր,ամրապնդել բառիմաստության գիտելիքները՝ բառը որպես պատկերավորման միջոց,ճանաչել ,կատարելագործել կետադրական նշանները,համագործակցել ընկերների հետ՝ պահպանելով բարեվարքության և խմբային աշխատանքի սահմանված կանոնները:

Դասի ընթացքը.

ՈՒսուցիչ	Սովորողներ
Մտագրոհ,ներկայացնել ,հիշեցնել	Պատասխանում են ուսուցչի
ին՞չ է վայելչագրությունը,մայրենի	հարցերին,հարց ու պատասխանի
լեզուն արժևորելու կարևորու -	միջոցով կարևորում մայրենի լե-
փյունը:	զուն պատշաճ արժևորելու կարե-
Տեքստի ընտրության դերային խաղ հնար՝<<Ձնեռ պապիկի այց՝ կախարգական գլխարկով>>:	վորությունը: Արդեն ընտրված Ձմեռ պապը /սովորողներից/, ներս է մտնում
	երաժշտության տակ իր <<կախարդական գլխարկով>>, որի մեջ արտագրության տեքստերն են:
Տեքստային աշխատանք `բազմի-	Ընտրվում է գրավոր աշխատանքի
մաստ բառեր,պատկերավոր ար-	տեքստը:
տահայտություններ, կետադրա-	

կան նշաններ,աշխատանք գրա-	Կարդում են ստեղծագործությունը
տախտակի վրա:	3-րդ դասարան<<Եղևնին>>
Տարբեր տեքստերի զգացմուն-	2-րդ դասարան <<Փափուկ ձյուն>>
քայնության արտահայտում,	կատարում տեքստի վերլուծու -
առաջարկություն սովորողներին	թյուն,ինչ՞ ժանրի ստեղծագործու-
խմբային քննարկում:	թյուն է:Համեմատում են ստեղ-
	ծագործություններում առկա տրամադրությունը, տարբերությունը:
Սկսել գրավոր աշխատանքը՝ խը-	
թանելով մրցույթային կարգը:	Վերհիշում են կետադրական
Առաջարկել սովորողին ինքն իրեն	նշաններն, բերում օրինակներ,
<<գնահատել>>՝իրենց գրավոր աշխատանքի ներքևում գծված սանդղակը լցնելով:	սկսում գրավոր աշխատանքը:
Հետևել գրավոր աշխատանքի ընթացքին:	Աշխատանքի ավարտից հետո ուսուցչի գծած սանդղակի մեջ
Դասի ավարտ՝ սովորողների կողմից իրենց<< գնահատած>> սանդաղակի քննարկում,ձեռագրերի ցուցադրում:	գունավորում այնքան, ինչքանով որ այդ դասի ընթացքում ձեռք են բերել նոր հմտություններ:
Վայելչագրության մրցույթը գեղեցիկ, պատշաճ ավարտելու կապակցությամբ մրցանակների հանձնում: Անդրադարձ օրվա Մայրենիի դասին,գրավոր աշխատանքի արդյունքներին:	Անդրադառնում են օրվա աշխա- տանքին,իրենց գնահատականին,մրցանակները ստանալով պարտավորվում ավելի բարձր պահել իրենց մայրենի լեզուն, խոսոլ միայան գրական հայերենով: